

ՀԱՅՐԵՆԻՔ – ՄՓՅՈՒՈՔ

Ատոմ Ավետիսյան – 80

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՁԱԿ



Հայաստան մեկնող հարզելի հայրենակիցներ, առողջարանային քաղաք Ջերմուկ այցելելիս, չնոռանաք մտնել Ատոմաշեն և հանդիպել ժամանակակից հայ արձակի ճանաչված գրողներից մեկին, ինչպես նաև գիտնական ու փիլիսոփա ԱՏՈՄ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, որի «Ձախողում» վեպի շնորհանդեսին վերջերս ներկա գտնվեց մեր հատուկ թղթակից, բանաստեղծ – լրագրող Սոնա Կարապետյանը:

ԱՐԵՎՆ ԻՆՉՈՒՒ Ե ԻՆՉՆԻՑ ԱՄԱՉՈՒՄ

Ատոմ Ավետիսյանի «Ձախողում» վեպի համար բնաբան է ընտրված հոռուական կայսեր Մարկոս Ավրելիանոսի խոսքերը. «Մի ընկճվիր և մի հուսահատվիր, եթե քեզ քո արարքներով ամբողջովին չի հաջողվում կատարել այն բոլոր լավը, ինչ դու կցանկանայիր: Եթե դու գլորվել ես քո բարձունքից, ձտիր նորից բարձրանալ: Եվ հաճելի է գիտակցաբար ետ, դեպի սկիզբը գնալ»: Բնկ Ատոմն իր ակունքներից երբևէ չի էլ հեռացել: Դրա վաղ վկայությունն է այն անպարզից սերը հայրենի եզերքի հանդեպ, որին ակնապետն է լինում երջանիկ ընթերցողը: Այդ, ես համարում եմ բախտ ու երջանկություն այսօրվա հայ արձակում ունենալ նման անկեղծ մենախոսություն սովետական կայանավորի իրարամերձ մտորումների և բազմախոսով տվյալասանքների մասին: Չերկնչել է ասպետական քաջությանը ընդհանրապես «Անարդարություն» կոչվող մեթենայի դեմ, դա միայն հատուկ է քչերին ընտրյալներին: Անամարդկային տառապանքների ու ստորացումների, նեցուկության ու դավաճանության անբանակ հարվածներ ճաշակելուց հետո Ատոմ Ավետիսյանի հերոսը շարունակում է մնալ Մարդ մեծատառով, բարի, առաքինի – մարդ ընկեր, քաղաքացի, հայր ու ամուսին:

Մյո մեծ քառակուսի տան պուների արանքում նա տեսել է պատերազմի բերած սովը, չաղ-չաղ ոջիլները, որոնք շրխկոցով պայթում էին, երբ տատը նրա շապիկը թափահարում էր տաք թոնքի մեջ: Այստեղ աթորի ծիւց կծկծացել են նրա աչքերը, երբ տատի փեշը բռնած սպասում էր ճուճորդությանին, որ տատն ամեն անգամ տալիս էր նրան սոխտած անելուց հետո: Գյուղական տեսարան նկարագրելու անմրցունակ վարպետ է Ատոմ Ավետիսյանը, մանավանդ, երբ այդ տեսարանում գլորվում ու պատեպատ է գարկվում իր որը ու կորած մանկությունը... Գոմի դռանն ընկած են ուռենու ճյուղերից հյուսված երկու կողով, որոնք պապն էր հյուսել: Մեծով Ատոմը դարձան էր բերում Ղոխ: Նրա փոքրիկ մարմինը կորչում էր կողովի տակ: Հետևից դիտողին թվում էր, թե կողովը սապուներ հագած ինքն իրեն է բարձրանում Շոր աղբյուրի դարկվեր: Փոքր կողովն ավելի անտանելի էր, նրանով թրիք էր տանում մինչև գյուղի ծայրը Մայիտակ ձորի մոտ, իրենց բասման: Այդ երկու-երեք հարյուր մետրը նրան թվում էր դժոխքի ճանապարհ... Մինչդեռ դժոխքի ճանապարհը նոր էր սկսվում կաշառված քննիչի առանձնասենյակից: Պատկերների հակադրությունը շարունակվում է, մանավանդ, երբ գրողի մի քանի վրձնահարվածներով աչքից առջև կանգնում է նեղ ու դավադիր չինովնիկի դիմանկարը. «Դուքս պրծած աչքերն ու ամուր ծնոտը ընդգծում էին քննիչի գիշատիչ էությունը, ձիգ իրանը փաստում էր մշտապես լարված լինելու վայրի բնագործ, լուսանային հայացքը անհանգիստ մի կետից մյուսն էր թափառում չըխմանալով քննիչի շիտակ ու համառ հայացքին»: Բոլոր փաստերը քո դեմ են, դու արդարացուցիչ որևէ բան կարող ես հստ: – Կփորձեն որևէ փաստի մարդու «արդարացուցիչ» որևէ բան ասել: Ինձ համար դժվար կլինի, այնուամենայնիվ առանց պայքարի չեմ հանձնվի: – Դե ուրեմն սկսիր քո պայքարը, – տարեք սրան, – հոխորտաց քննիչը: Եվ սկսվեց պայքարը գերության մեջ գտնվող ազնիվ ու հայրենասեր մարտիկի և երկաթյա ճաղավանդակ հիշեցնող սիտեմի միջև և դարից երկար ձգվեց տասներեք տարվա ամեն մի օրը: Իսկ լույսի և խավարի, ազատության և գերության սահմանազատման բնութագրիչը շատ ինքնատիպ է. «Քիչ անց բռունցքները սեղմեց և բարձրացավ տեղից: Մոտեցավ խցի լուսանցքին: Դիմացի Շիչ սարի կատարը լուսավորված էր արևի վերջին շողերով: Ձախափից եկել ճանապարհով պանում էր իր ծառայողական մեքենան հետևից թողած փոշու պատնեշով բաժանելով նրա երեկն ու այսօրը»: Ատոմի երկերը մնաց անցած դարի դժոխային պարունակներում, իսկ այսօրն էր հայտ բերեց իր իսկ ապրված կյանքի շիտակ վերլուծաբանին, մարդկային տկար էություն ճշմարիտ ու դիպուկ ակտորոշողին, մեծատառով մարդու ազնիվ որոնողին: «Ձախողում» վեպի գեղարվեստական մեծ արժեքը ոչ միայն ժամանակի բարբերի անխարդախ ճանաչողականությունն

է, այլև մեր կողքին ապրող փիլիսոփայի խոհերը համամարդկայի այնպիսի երևույթների մասին, ինչպիսիք են սերը, ընտանիքը, ազգը, լեզուն, ընկերը, հավատքը, ազատությունը և այլն: Մեծ թե ինչ է խորհում հեղինակը. «Բոլոր արվեստագետները դարեր շարունակ որոնել են մարդ կոչված արարածին: Եվ յուրաքանչյուրը պարզում է մարդու էություն, հոգու մեկ շողը: Եվ ով կարող է ավելի լավ ճանաչել մարդու ներաշխարհը, եթե ոչ ինքը մարդը, այն էլ անկեղծության պահին»: Ատոմի հերոսը գտնում է, որ մարդու կյանքը անընդհատ տառապանքների մի շղթա է, երբեմն-երբեմն առկայծող երջանկության ակնթարթներով: Հենց այդ ակնթարթների սպասումն է մարդուն հավերժորեն կապում ճակատագրով տրված տեղին է. «Մերը հաճույք չէ, այն դժբան տառապանք է, բայց սիրո առկայությամբ բուր օժովարությունները հաղթահարելի են»: Որն է ընտանիքը, ընտանիքը այն գլխավոր, գուցե և միակ օղակն է, որ պահել է հայի տեսակն այս հողագնդի վրա: Ատոմ Ավետիսյանի վեպի լեզուն երբեմն բարդ է, խորն ու եթարտեստային, օրինակ նա կարող է կարոտը բնութագրել այսպես. «Կարոտի չափը դու ես... Կարոտն ավերման ներգործության է ենթարկվում առաջինը հենց ժամանակի կողմից ժամանակակից մեջ: Կարոտի չափը կախված է հանդիպման հնարավորությունից հակադարձ հանձնառական կապով: Ինչպես պոռնեցյալ ենթգիան է վերածվում կինետիկի, այնպես էլ կարոտը: Այստեղ պոռնեցյալ, պրոզան, ֆիզիկան խառնված են իրար, այն բայց հոգեկերտվածքի տեսքով, որի ամեն մի մակրոթացությանն ու տեղատվությանը հաղորդակից է ընթերցողը»: Տեղին է նշել նաև վեպի ատոմական աղ ու պոչիտեղով համեմված հումորի մասին, խորն ու անթաքույց ծաղրի տիրող բարբերի, կալանավայրի ժարգոնի, չինովնիկների տգիտությունը և այլն մասին: Նրա Ատոմ Ավետիսյանի պոռնեցյալն առանձին խոսակցության նյութ է: Երբ ծանոթացա «Արևն ինչո՞ւ է ինձինց ամաչում» բանաստեղծությունների գրքին, զարմացավ քեզի պոռնեցյալի հանդեպի խորությունը և այլն: Արևն այսինքն կյանքը, ամաչում է այն մարդուց, որի նկատմամբ այդքան դժարատրեն անարդար է եղել հենց ինքը կյանքը: Ատոմը խոստովանում է. «Եթե պոռնեցյալն ինձ լքեք, ինձ համար շատ դժվար կլինի»: Ուշադիր ընթերցողը կհանդիպի ոչ միայն պոռնեցյալի և պրոզայի, արվեստի և կյանքի, սիրո և ատելության, ընկերության և դավաճանության և այլ համամարդկային խնդիրների ավետիսյանական բանաձևերին, այլև յուրը խորհելու և չիմացածի դատեր անելու բախտ կունենա ֆիզիկայից, քիմիայից, աստղագիտությունից, հավանականության տեսությունից, հասարակագիտությունից, մեխանիկայից և այլն: Նա շատ հանգիստ և առանց թեմայից շեղվելու կարող է բնարկել այսօրվա հայոց վերջի օրախոսքի հարցը առաջարկելով փափաջայանական շատ բնորոշիչ տարբերակը այն է արևեկային և արևմտահայ լեզուների բնականոն համատեղումը: Ճիշտն ասած, սիրելի հայրենակիցներ, այս մեկ հողվածով անհետ էր ամբողջությամբ անորդաբան Ատոմ Ավետիսյանի գրական ժառանգությանը, բացահայտել ամենալավատես ու ամենասրտացավ հայրենասերի ոչ միայն գրական-գեղարվեստական, այլև մարդկային իրական կերպարը: Մարդը, ով նրա քննության կիզակետն է, հիասթափեցնում է նրան իր անկատարությամբ, շարունակման ու ունայնությանը: Բայց մի վերջին հույսով Ատոմի հերոսը կրկին դիմում է մարդուն. «Իմ ողջ գիտակցից կյանքում մարդկանց մեջ փնտրել եմ լավը, բարին, ազնիվը և այդպես էլ չգտա: Եվ դա թիչ է, ամենքը ում բարին արեցի, ինձ չարով պատասխանեցին: Այնուամենայնիվ... Ես հուսահատ չգտնում եմ. Մարդի կ, սթափվեք, կյանքն անցնում է, լիքը լինի այն, թե դատարկ, միևնույն է անցնում, է, ափսոս է կյանքը, այն դատարկ մի թողեք, մի թունավորեք միայնակ կյանքը, մի փշոքեք ուրիշների երագը: Դուք էլ ձեր երագը հյուսեք: Ամենամեծ հրաշքը կյանքում երագելն է...» Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Ատոմ Ավետիսյանի «Ձախողում» վեպի համար բնաբան է ընտրված հոռուական կայսեր Մարկոս Ավրելիանոսի խոսքերը: